ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար շինարարական աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «14» հունիսի 2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/04» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2019թ.-ի հունիսի 14-ին, ժամը 11:00-ին:

2. Տեղեկություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման հայտով սահմանված է, որ հիմք ընդունելով ՀՀ սնանկության դատարանի վարչական շենքի դատական դահլիճների և աշխատասենյակների վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ գնման առարկայի ձեռքբերման առավելագույն գինը չի կարող գերազանցել 879 500 ՀՀ դրամը:

3. **Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

Մասնակցի անվանումը (անունը)	**Էլ. փոստի հասցեն**
ԱՁ Վահրամ Կնյազյան	knyazjanvvs@mail.ru
«ԿՈՓ» ՍՊԸ	Kop_000@mail.com

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

4. **Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

ԱՁ Վահրամ Կնյազյանի և «ԿՈՓ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. **Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

ԱՁ Վահրամ Կնյազյանի և «ԿՈՓ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. **<u>Մասնակիցների առաջարկած գները՝</u>**

Հ/Հ	**Ծառայության անվանումը**	**Գնային առաջարկները (ՀՀ դրամ)**		
		ԱՁ Վահրամ Կնյազյան		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	**ԱԱՀ**	**Ընդհանուր գինը**
1	2	3	4	5
1	շինարարական աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ	290 000	-	290 000

Հ/Հ	**Ծառայության անվանումը**	**Գնային առաջարկները (ՀՀ դրամ)**		
		«ԿՈՓ» ՍՊԸ		
		Արժեքը (ինքնարժեքի և	**ԱԱՀ**	**Ընդհանուր գինը**

		կանխատեսվող շահույթի (եկամտաբերության)		
1	2	3	4	5
1	շինարարական աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ	399 000	-	399 000

Հանձնաժողովը որոշեց.

Հաշվի առնելով ընթացակարգի օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կազմակերպված լինելու հանգամանքը և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների կողմից առաջարկված գների նվազեցման նպատակով ԱՁ Վահրամ Կնյազյանի և «ԿՈՓ» ՍՊԸ-ի հետ վարել միաժամանակյա բանակցություններ

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

-նիստը կասեցնել, և բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2019թ. հունիսի 18-ին՝ ժամը 14:30-ին, Դատական դեպարտամենտի վարչական շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արմեն Ղուկասյան
Անդամներ՝ _____ Էդգար Մելքոնյան
_____ Կարեն Մելքոնյան
_____ Արմինե Ալիխանյան
_____ Ավետիք Ավագյան
Քարտուղար՝ _____ Օֆելյա Ասատրյան